թապաշտական աղղակներ անհրաժեշտ են դարձրել նրա ստեղծումը: Մի երկիր, որը չի կերակրում եւ որին պէտք է կերակրել: Դէպքեր, որոնք մնում են անհասկանալի, ձգտումներ, որոնք ենտեսապէս պատճառաբանուած չեն: Մոխիր: Pulvis est: Եւ այդ մոխիրի վրայ երկու Fiat-ներ ուրիշի դրամով ընուած, չորս կօսպերատիվ, մի քիչ բամպակ եւ մի քիչ ծխախոտ. խանութպանի հոգեբանութիւն, փաշայի բռնակալութիւն եւ հաղարաւոր բրօշիւրներ, դեկրետներ, թղթեր, պաշտօնեաներ, որոշումներ, ճառեր, ճառեր, ճառեր... Մեր հին բեժիմի վաճառականները աւելի հետեւողական էին, աւելի տրամաբանական իրենց նեղմիտ նիւթապաշտութեան մէջ: Մանուֆակտուրան տանում էին մեծ շուկայ...

— Ուստի՞...

— Ուստի Հայաստանը շուկայ չէ: Հայաստանը դաղափար է, հոգեկան իրականութիւն, խորհրդապաշտական անհրաժեշտութիւն: Նա աւելի խոր է քան առարկայական պայմանները, աւելի տեւական, քան պատմական անցքերը եւ քաղաքական իրադարձութիւնները: Հայաստանը՝ Արմէ՛նիա՝ մոխիրների տակ թաղնուած, դրսից աննշմարելի, մշանջենական կրակն է. հողերի տակ խուլօրէն դղրդող աղբիւրը, մի խօսքով, իր արտայայտութեան ձեւը դեռ չգտած տարօրինակ եւ մեծաշունչ պօէման է: Սեւան, Ախթամար, Էջմիածին, ուրիշ անուններ եւս, թաղնուած էութիւններ են, բոցավառ շունչ են, չեփորող անյայտ...

— Վաղը առաւօտ, ժամը 6-ին:

— Սեւա՛ն:

— Սեւա՛ն:

— Իշանութեան նախագահի տունը: Ուրեմն...

— Իշխա՞նի...

Շինարա՛ր իշխանի...

— Զմոռանաք:

— Եւ դարունը լոյսերով դրահաւորուած արծաթէ իր սուրերը դարնում է Ժայռերին:

— Երկիրը հայոց բոց է...

— Ցը՛...

— Ձերմակ...

* * *

Երբ տեղ հասայ, նկարիչը արդէն դրան ծօտ կանգնած էր: Երկնքի լայնօրէն բացուած կապտաւուն հովահարի տակ, փողոցը զսպել էր իր լռութիւնը, մինչ պարտէզների պատերից դմբուխտ էր հոսում: Արդեօ՞ք ուշացանք: Աւելի շուտ չափագանց կանուխ էր. ինքնաշարժերը չէին եկել. տան փեղկերը դեռ դոց էին:

Լա՛ւ են լուսաբացի ճանապարհորդութիւնները. բնութիւնը ճօճում է սրտերի մէջ եւ ամէն մի քայլ նոր բացուած մի պատուհան է: Ու լաւ է սպասել ցանկացած վայրերի անյայտ այցելութեան, որովհետեւ ի՞նչ են այդ վայրերը, եթէ ոչ վերյիշումներ, հեռաւոր անցեալում տեսած պատկերներ, հոգեկան խոր անորոշում կառուցուած գոյութիւններ:

Նկարիչը մտահոգ է եւ տրտում: Հայաստանի դաշտանկարը վրձինի տակ երերում է անհանգիստ վիշապի նման: Գոյները բռնկում են. կտաւի վրայ գծերը փուլ են գալիս եւ բնութեան ճարտարապետական ձեւը անծայր շղարշների տակ խոյս է տալիս եւ անհետանում է: Անկարելի է մասնաւորել: Նկարուած մի անկիւնը, տունը, ծառը, աղբիւրը, տարօրինակ կերպով փոքրանում է, աղքատանում, նոեմանում՝ «ձեռքի միջից փախչում է»: Բնականը նկարի մէջ աշակերտական փորձի բնոյթ է առնում. բաց նամակի, գունաւորուած լուսանկարի ոճան գեղեցկութիւն է դառնում: Ուստի, փնտռում է գոյնը գոյնի համար. միամիտօրէն շարուած պտուղներ՝ թաւշեայ բոցերի նման. չինական, բուխար եւ պարսկական երփներանգ կտաւներ ճափոնական դիմակների շուրջը նետուած, եւ կամ, անկարելի համադրութիւններ՝ ներքնապէս ճիշդ, արտաքնապէս արտառոց՝ լեռների եւ ձորերի: Խորամանկ միամտութիւն:

Նկարիչը հեշտասէր է: Արեւելեան ձեւով՝ մսերը չօշափել, գոյնը զգալ, մետաքսը ձեռքի մէջ տրորել, մարմինները փաթթել լուսնային երազանքի մէջ, բուրումների մակերեսային դողը զգալ, մութ լազուար արատի առջեւ երկարօրէն կանգ առնել եւ ստնդական սուտակի ծօտ տառապել: Մինչ հայ դաշտանկարը կարծր է, գրեթէ կոպիտ, խակ եւ արեւային: Անկարելի է մօտենալ:

Եւ որովհետեւ Նորքի լանջքից բոցավառ-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան